

## Իրական և ձևական իրավական հնարավորությունները սահմանադրաիրավական նորմերում

Լեյոյան Հասմիկ Ա.

«YSU Հայաստան» ՓԲԸ

Տեղանքի տեղակայման պայմանագրերի կառավարման ավագ մասնագետ,  
Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ  
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0001-7849-9591>

[hasmik.leyloyan@ysu.am](mailto:hasmik.leyloyan@ysu.am)

ՀՏԳ՝ 340.12:342; EDN: FZKPJY;

DOI: 10.58587/18292437-2024.2-29

**Հանգուցաբառեր՝** Իրավունք, սահմանադրաիրավական նորմ, իրավական հնարավորություն, իրական իրավական հնարավորություն, ձևական իրավական հնարավորություն, իրավական իրականություն, իրավունքի կենսագործում, իրավաստեղծագործություն, իրավունքի փիլիսոփայություն

### Реальные и формальные правовые возможности в конституционно-правовых нормах

Лейлоян Асмик А.

*Старший специалист по управлению контрактами по размещению сайтов в ЗАО «МТС Армения»,  
аспирант кафедры теории и истории государства и права юридического факультета,  
Ереванский государственный университет (Ереван, РА)*

**Аннотация.** Философско-правовая категория «правовая возможность» применительно к правовым нормам может быть рассмотрена с точки зрения возможности создания правовых норм или правотворчества, с точки зрения правовых возможности реализации норм право, а также с точки зрения самих правовых норм или их содержания. Учитывая эти аспекты, автор особо подчёркивает важность теоретического анализа правовых возможностей в конституционных нормах права, поскольку трудно переоценить роль Конституции, как основного закона, в законодательной системе, а также в жизни государства и общества.

Рассматривая понятие или категорию «правовая возможность» в конституционных нормах права, автор на примере статей, положений или принципов, заложенных в Конституции Республики Армения, обнаруживает реальные и формальные правовые возможности и проводит анализ объективных и субъективных факторов (взаимосвязь правовой и социальной действительности, правотворческая деятельность законодательных органов, поведении субъектов права и т. д.) превращения формальных возможности конституционных норм права в реальные правовые возможности.

Согласно представленному в статье заключению, анализ формальных и реальных правовых возможностей в конституционных нормах права имеет важное методологическое значение, поскольку в ходе анализа рассматриваются и выделяются правовые предпосылки, благодаря которым становится возможным глубокое понимание структуры эффективной реализации конституционных норм права, что является одной из актуальных проблем правотворчества, а также имеет важное значение в правоприменительной практике.

**Ключевые слова:** Право, конституционно-правовая норма, правовая возможность, реальная правовая возможность, формальная правовая возможность, правовая действительность, реализация права, правотворчество, философия права

### Real and Formal Legal Possibilities in Constitutional Norms

Leyloyan Hasmik A.

*Site Implementation Contracts Management Senior Specialist at "MTS Armenia" CJSC  
Post-Graduate Student of the YSU Chair of Theory and History of State and Law (Yerevan, RA)*

**Abstract.** The philosophical-legal category "legal possibility" concerning legal norms can be considered from the perspective of the possibility of creating legal norms or lawmaking, from the perspective of the legal possibility of realization of legal norms, as well as from the perspective of the legal norms themselves or their content. Taking these aspects into account, the author especially emphasizes the importance of theoretical analysis of legal possibilities in constitutional norms of law, since it is difficult to overestimate the role of the Constitution, as the fundamental law, in the legislative system, as well as in the life of the state and society.

Examining the concept or category of "legal possibility" in the constitutional norms of law, the author, using examples of articles, provisions, or principles laid down in the Constitution of the Republic of Armenia, identifies real and formal

legal possibilities and conducts an analysis of objective and subjective factors (the interrelation of legal and social reality, the law-making activities of legislative bodies, the behavior of subjects of law, etc.) for transforming the formal possibilities of constitutional norms into real legal possibilities.

According to the conclusion presented in the article, the analysis of real and formal legal possibilities in constitutional norms has important methodological significance, as it examines and identifies the legal prerequisites. This enables a deep understanding of the structure of the effective realization of constitutional norms, which is one of the pressing issues in lawmaking activities, also holds significant importance in law implementation practice.

**Keywords:** Law, constitutional norm, legal possibility, real possibility in law, formal possibility in law, legal reality, realization of law, law making, philosophy of law

«Իրավական հնարավորություն» իրավափիլիսոփայական կատեգորիան իրավական նորմերի նկատմամբ կարելի է դիտարկել տարբեր իրավական երևույթների տեսանկյունից: Նախ իրավական նորմերի ստեղծման հնարավորության կամ իրավաստեղծագործության շրջանակներում, այնուհետև իրավական նորմերի կենսագործման իրավական հնարավորության տեսանկյունից և վերջապես ինքնին իրավական նորմերի կամ դրանց բովանդակության տեսանկյունից: Նշվածը նկատի ունենալով, իրավական հնարավորությունների տեսական վերլուծությունը, մեր կարծիքով, հատկապես կարևորվում է սահմանադրաիրավական նորմերում, քանի որ դժվար է գերազանահատել մայր օրենքի՝ Սահմանադրության դերը օրենսդրության մեջ, պետության և հասարակության կյանքում: Բացի այդ, վերլուծության ընթացքում, իրավական հնարավորության առանձին տեսակների՝ մասնավորապես իրական և ձևական իրավական հնարավորությունների միջոցով, բացահայտվում և վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում սահմանադրաիրավական նորմերի արդյունավետ կենսագործումը և վերջինիս համար առավել արդյունավետ իրավական կառուցակարգերի ներդրման հնարավորությունը, ինչն անշուշտ ունի մեթոդաբանական և գործնական կարևոր նշանակություն:

Դիտարկելով «իրավական հնարավորություն» հասկացությունը կամ կատեգորիան սահմանադրաիրավական նորմերում, պետք է փաստենք, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բուն տեքստում «հնարավորություն» հասկացությունն ինքնին օգտագործվում է ոչ ավելին քան չորս անգամ (1. Գլուխ 1, 8-րդ հոդված, 2. Գլուխ 2, 67-րդ հոդված, 3. Գլուխ 3, 87-րդ հոդված, 4. Գլուխ 9, 186-րդ հոդված) [2]: Բայց և այնպես, սահմանադրաիրավական նորմերն իրենց բովանդակությամբ անուղղակիորեն պարունակում են իրավական հնարավորությունների փոխակերպումներ, ինչը թույլ է տալիս իրավունքի սուբյեկտներին՝ իրենց ազատության սահմանված հստակ շրջանակներում իրացնել նախատեսված իրավունքները: Եվ հենց այս իրավական հնարավորությունները կամ

իրավունքի սուբյեկտների սահմանադրաիրավական նորմերով սահմանված ազատությունն է, որը հնարավորություն է ընձեռում պետությանը կամ հասարակությանը ապահովել սրբնազգ զարգացում քաղաքական-իրավական և տնտեսական ոլորտներում: Վերջինս պայմանավորված է նրանով, որ սահմանադրաիրավական նորմերը բխում են իրավական իրականությունից, որը դիալեկտիկական կապի մեջ է սոցիալական իրականության հետ: Իրավական իրականության (կամ իրավական նորմերի) և սոցիալական իրականության նշված փոխկապակցվածությունը փաստարկվում է նաև մի շարք իրավաբան - տեսաբանների մոտեցումներում, մասնավորապես Դ. Ա. Կերիմովի [5, էջ 278] և Ա. Վ. Վիսսարովի [3, էջեր 89-90] մոտ: Համաձայնվելով վերջիններիս մոտեցումների հետ, հարկ ենք համարում ընդգծել, որ սահմանադրաիրավական նորմերը ևս անքակտելիորեն և օրգանապես կապված են սոցիալական (այդ թվում՝ քաղաքական, տնտեսական և այլն) իրականության հետ և զարգանում են դրան զուգահեռ: Սա նշանակում է, որ սահմանադրաիրավական նորմերի բովանդակության մեջ առկա իրավական հնարավորությունները ձևավորվում են սոցիալական իրականության մեջ գոյություն ունեցող օրինաչափությունների, զարգացումների, հասարակության իրավագիտակցության աստիճանի, կամքի, պահանջմունքների և այլ գործոնների ազդեցության ներքո: Միաժամանակ, սահմանադրաիրավական նորմերի կենսագործման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է իրավաստեղծագործության ընթացքում, օրենսդիր մարմնի կողմից, սոցիալական իրականության վերոհիշյալ գործոնների ճիշտ հաշվարկմամբ և ամբողջ ծավալով դրանց նախատեսմամբ իրավական հնարավորություններում:

Վերոգրյալի շրջանակներում, քննարկենք, օրինակ, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը, որը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է [2]: Տվյալ ձևակերպման մեջ պետության թվարկված հատկությունները ներկայացվում են ոչ թե, որպես հիմնաքարային նպատակներ, այլ, որպես արդեն իսկ ձեռք բերված արդյունք: Այստեղ, պետք է արձանագրենք, որ տվյալ հոդվածում

սահմանադրաիրավական նորմը սահմանում է այնպիսի իրավական հնարավորություններ, որոնք հասարակության կամ պետության զարգացման այս փուլում ամբողջ ծավալով չեն կարող կենսագործվել: Մասնավորապես, պետությունը ամբողջ ծավալով չի ապահովում բնակչության կենսամակարդակը, այն չի ապահովում անհրաժեշտ սոցիալական ծառայություններ և, հետևաբար, դեռևս սոցիալական պետություն չէ: Այնուհետև, պետության իրավական համակարգը, օրենսդրությունը, ինչպես նաև հասարակության իրավագիտակցության մակարդակը, նույնպես, հեռու է կատարյալ լինելուց, հետևաբար ամբողջ ծավալով իրավական պետություն չէ, ինչը նշանակում է, որ տվյալ սահմանադրաիրավական նորմը ձևական իրավական հնարավորություն է:

Անդրադառնալով ձևական իրավական հնարավորություններին, նշենք, որ հիմք ընդունելով իրավական հնարավորությունների բովանդակությունը, մասնավորապես, ելնելով իրավական երևույթների ստեղծման և կենսագործման համար համապատասխան նախադրյալների առկայությունից՝ իրավական հնարավորություններն անհրաժեշտ է տարբերակել իրական և ձևական իրավական հնարավորությունների [1, էջ 6]:

Տեսաբան Ա. Վ. Վիսսարովի համոզմամբ, իրավական նորմերում սահմանված ձևական իրավական հնարավորությունները կարող են վերաժվել իրական իրավական հնարավորությունների իրավաստեղծագործության միջոցով [4, էջ 14]: Կիսելով Ա. Վ. Վիսսարովի այս մոտեցումը, նշենք նաև, որ հնարավորությունը վերածվում է իրականության իրավական նորմերի շնորհիվ՝ այսինքն, երբ օրենսդիր մարմինը իրավաստեղծագործության միջոցով սահմանում է նորմատիվ իրավական նոր ակտ: Այսպես, օրինակ, սահմանադրաիրավական նորմերի ձևական իրավական հնարավորությունները վերածվում են իրական իրավական հնարավորությունների՝ իրավունքի առանձին ճյուղերում (քաղաքացիական, քրեական, վարչական, աշխատանքային և այլն) Սահմանադրության, այս կամ այն, նորմի, դրույթի կամ սկզբունքի կոնկրետացման շնորհիվ: Կոնկրետացումը սահմանադրաիրավական նորմերի կենսագործման կարևոր պայման է [6]: Գաղտնիք չէ, որ մարդու և քաղաքացու մի շարք հիմնական և/կամ սահմանադրական իրավունքները և ազատությունները կենսագործվում են ճյուղային օրենսդրության միջոցով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանադրաիրավական նորմերը կրում են ընդհանուր բնույթ և անհրաժեշտություն է առաջանում մշակել այդ նորմերի կիրառման ընթացակարգային ձևերը, որոնք կստեղծեն

ճյուղային իրավունքի իրական իրավական հնարավորությունները:

Սահմանադրաիրավական նորմերի կիրառման ընթացակարգային ձևերի մշակման գործընթացում շատ կարևոր է պահպանել Սահմանադրության տառն ու ոգին, դրանում սահմանված արժեքային ուղեւորները, ինչպես նաև սահմանափակումները՝ նախատեսված լիազորությունների շրջանակի կամ համապատասխան իրավունքներ ու պարտականություններ կրող սուբյեկտների համար, քանի որ նշվածից ցանկացած շեղում անընդունելի է և կոհտարկվի որպես Սահմանադրության խախտում: Տվյալ դեպքում սահմանադրաիրավական նորմերի ձևական իրավական հնարավորությունները չեն վերաժվել ճյուղային իրավունքի իրական իրավական հնարավորությունների կամ կվերաժվեն խեղաթյուրված, ինչը կհակասի իրավական իրականությանը, այդ թվում նաև իրավունքի ու օրենքի տրամաբանությանը: Հետևաբար, իրավաստեղծագործության ընթացքում օրենսդիր մարմինը պետք է հստակ, համապարփակ և կշռադատված վերլուծի և դիտարկի սահմանադրաիրավական առանձին նորմերում առկա ձևական իրավական հնարավորությունները, որից հետո միայն, օրենսդրական կոնկրետացման միջոցով, դրանք խելամիտ, օբյեկտիվ և հետևողական վերածի իրական իրավական հնարավորությունների: Այս եղանակով հնարավոր է դառնում սահմանադրաիրավական նորմերի արդյունավետ կենսագործումն իրավական իրականության մեջ:

Վերոգրյալի համատեքստում, չի կարելի անտեսել նաև իրավունքի սուբյեկտներին, քանի որ ձևական իրավական հնարավորությունը ամբողջ ծավալով վերածվում է իրական իրավական հնարավորության ոչ միայն պետական մարմինների և ինստիտուտների, այլ նաև մեծ թվով իրավունքի սուբյեկտների գործուն մասնակցությամբ, ինչը շատ դեպքերում կարող է հանգեցնել ձևական իրավական հնարավորության կենսագործման բացասական արդյունքի: Որպես օրինակ, դիտարկենք ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները [2], որոնք որոշակի հանգամանքներից ելնելով (օրինակ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ գործունեություն) ոչ միշտ են ունակ կենսագործվելու: Արդյունքում, իրավունքի սուբյեկտի մոտ կարող է ձևավորվել այն համոզմունքը, որ պետական մարմինները չեն պահպանում իր հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Նմանօրինակ իրավիճակում շարքային քաղաքացու կամ իրավունքի սուբյեկտի մոտ ի հայտ է գալիս պարզունակ մոտեցում՝ համաձայն որի, եթե պետությունը ոտնահարում կամ անտեսում է իր

իրավունքները, ապա երբեմն նա ևս կարող է անտեսել իրավունքի նորմի պահանջը: Այսպիսով, իրավունքի սուբյեկտը սկսում է անտեսել իրավունքում առկա ձևական իրավական հնարավորությունները, իսկ հետագայում նաև՝ իրավունքը կամ օրենքը ընդհանրապես:

Մեր համոզմամբ, վերը նկարագրված արատավոր շրջանից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է, որպեսզի օրենսդիր մարմինը իրավաստեղծագործության ընթացքում՝ սահմանադրաիրավական նորմերում, դրույթներում կամ սկզբունքներում, բացահայտի և վեր հանի բոլոր այն ձևական իրավական հնարավորությունները, որոնք իրավական իրականության մեջ ունակ չեն կենսագործվելու: Այնուհետև, ի հայտ եկած ձևական իրավական հնարավորությունները, համապատասխան նախադրյալների ստեղծմամբ, կամրագրվեն իրական իրավական հնարավորությունների տեսքով, ինչը անշուշտ իրավունքի սուբյեկտների համար կունենա կենսական կարևոր նշանակություն:

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Սահմանադրաիրավական նորմերը անքակտելիորեն և օրգանապես կապված են սոցիալական իրականության հետ, ուստի դրանց բովանդակության մեջ առկա իրավական հնարավորությունները ձևավորվում են սոցիալական իրականության մեջ գոյություն ունեցող տարաբնույթ գործոնների ազդեցության ներքո:

2. Քանի դեռ, սահմանադրաիրավական նորմերի ստեղծման և կենսագործման համար ամբողջ ծավալով չեն ստեղծվել իրավական, սոցիալական և համապատասխան այլ նախադրյալներ՝ սահմանադրաիրավական նորմերը չեն կարող կենսագործվել և կմնան որպես ձևական իրավական հնարավորություններ:

3. Սահմանադրաիրավական նորմերի ձևական իրավական հնարավորությունները կարող են վերածվել իրական իրավական հնարավորությունների՝ իրավունքի առանձին ճյուղերում հիմնական օրենքի ընդհանուր դրույթների կոնկրետացման եղանակով:

4. Իրավական իրականության մեջ սահմանադրաիրավական նորմերի արդյունավետ և ամբողջ ծավալով կենսագործումը կախված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ամբողջությունից՝ որոնց թվում են սոցիալական, քաղաքական, տնտեսական և այլ նախադրյալների առկայությունը, իրավաստեղծագործության ընթացքում օրենսդիր մարմնի պրոֆեսիոնալ և համապարփակ աշխատանքը, ինչպես նաև իրավունքի սուբյեկտների վարքագիծը:

5. Սահմանադրաիրավական նորմերում ձևական և իրական իրավական հնարավոր

ությունների դիտարկումը և վերլուծությունը ունի մեթոդաբանական կարևոր նշանակություն, քանի որ վերլուծության ընթացքում դիտարկվում և վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում խորապես ըմբռնել սահմանադրաիրավական նորմերի արդյունավետ կենսագործման կառուցակարգերը, ինչը իրավաստեղծագործության հրատապ խնդիրներից է և կարևորվում է նաև իրավակիրառ պրակտիկայում:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Լեյոյան Հ. Ա.**, Իրավական հնարավորությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները <https://doi.org/10.46991/S&L/2023.95.005> // «Պետություն և իրավունք», թիվ 1 (95), ԵՊՀ: – Երևան, 2023:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
3. **Виссаров А. В.**, Возможность в праве: Понятие, Особенности // «Марийский юридический вестник», Выпуск 9. 2012. - УДК 34.
4. **Виссаров А. В.**, Возможность в праве и правотворчество // «Марийский юридический вестник», 2015, № 1(12). - УДК 340.12.
5. **Керимов Д. А.**, Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. – М.: Изд. Аванта+, 2001. – 560 с.
6. **Рабинович П. М., Шмелева Г. Г.**, Конкретизация правовых норм: Общетеоретические проблемы. // «Правоведение». – 1985. № 6.

Տճանա/Հանձնվել է՝ 15.04.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 23.04.2024

Принята/Ընդունվել է՝ 29.04.2024